նիքների բաժանում և այդ մանր ընտանիքների մեջ մի կողմից առաջանում էր աղքատացում, մյուս կողմից՝ կապիտալի կուտակում վաշխառուական և առևտրական միջնորդության ճանապարհով։ Նրանք կամ անձամբ էին մասնակցում կամ ընտանիքի առանձին անդամների միջոցով վաշխառուական և առևտրական գործառնություններին։ Քահանայական շրջանում պակաս չէին վաշխառուները։ Քիչ չէին և այնպիսի քահանաներ, որոնց զավակները խույս տալով հոգևորական կոչումից՝ զբաղվում էին տեղական արտադրանքների արտահանությամբ և գործարանային ապրանքների ներմուծությամբ։ Արդեն XIX դ. կեսերից պարզ նկատվում էր ժառանգաբար քահանայական կոչման միևնույն ընտանիքում պահպանելու սովորության վերացումը։ Հոգևորական դասից դուրս եկած քիչ թե շատ ուսում առած և ընդունակ մարդը ձգտում էր իրեն նվիրել մի այնպիսի ասպարեզին, որը և՛ նյութապես ավելի էր ապահովում, և՛ ավելի պատվավոր և ազդեցիկ դիրք էր ստեղծում նրա համար նոր հասարակության մեջ։

Ուսման գործնական արժեքը Զանգեզուրի հոգևորականները շատ վաղ զգացին, գուցե ավելի վաղ, քան թե ազնվականները, քանի որ նրանց պաշտոնը անհրաժեշտորեն շաղկապված էր գրագիտության հետ։ Նրանց զավակների համար 1838 թվին Շուշում բացվեց թեմական դպրոց, որտեղ ընդունվում էին նաև աշխարհականների զավակները։ Այնուհետև բացված ծխական դպրոցներում առաջին հերթին տեղ էին գտնում հոգևորականների զավակները, որոնց թիվը շատանում էր նաև Շուշու պետական տարրական և միջնակարգ դպրոցներում։ Դարավերջի քառորդում ոչ մի քահանայական ընտանիք չկար, որի երիտասարդ սերունդը սովորած չլիներ որևէ դպրոցում, սակայն այդ սերունդը պատրաստվում էր ոչ թե հայրական գործունեությունը շարունակելու, այլ անցնում էր այլ պարապմունքների։ Հեղափոխության նախօրյակին Զանգեզուրումն էլ, որպես Անդրկովկասի այլ գավառներում, հոգևորականության կազմը լրացվում էր առավելապես ուրիշ խավերից դուրս եկած թերուս մարդկանցով, հոգևորական դասակարգի հեղինակությունը ընկած էր և ազդեցությունը հաբարակական գործերի վրա մեծ չափով խախտված, չնայած դարավոր անցյալով սրբագործված կազմակերպվածության։ Սակայն եկեղեցուն ենթարկվող ցանցի մեջ արդեն առաջացել էր մի այլ, թեև փոքր, սակայն հետզհետե մեծ ազդեցություն ձեռք բերող խմբավորում, ծխական դպրոցների ուսուցչությունը, որը ցարական կառավարության օրով իրավորեն ենթարկված էր հոգևոր իշխանությանը և նյութապես շաղկապված էր հայ լուսավորչական եկեղեցական ապարատի հետ։ Նրանց դիրքը տեղական մտավորականության մեջ ավելի և ավելի ամրանում էր այն պատճառով, որ նրանց և պետական դպրոցների ուսուցչության մեջ հաստատվել էր որոշ չափով կայուն համագործակցություն։ 1914—15 թվականներին գավառում գործում էին 3 պետական դպրոց 50 ուսուցիչներով։ Շուշիում կար հոգևոր դպրոց 5 դասատուներով։ Ուսուցչության այս երկու հատվածները չնայած այն հանգամանքին, որ ենթարկվում էին տարբեր իրավասություններին, հավասարապես համերաշխ ակտիվությամբ էին մասնակցում տեղական հասարակական խնդիրների լուծմանն ու ծավալվող դասակարգային, ինչպես և ազգային պայքարին՝ հարելով այս կամ այն կուսակցական խմբավորմանը և իրենց ետևից տանելով տեղական ինտելիգենցիային, որը կազմված էր առավելապես պետական և հասարակական հիմնարկներում, ինչպես և հանքավայրերում ծառայողներից։ Հոկ-